

ՊԱՐՏԱՊԵՅ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Ըլել ա, չի ըլել՝ մի թքավոր. եդ թքավորը ունեցել ա մի ախչիկ: Ախչկանը չըրչարելի են ըլել ուրիշ տերութիւննի՝ ուզելիս, դա տվել չի:

Ուրիշ մի Դն էկավ դրա քաղաքի դեմը մի քաղաք շինեց: Դրանից եդնը Ուշապը դես չարչարվեց, դեն չարչարվեց, եդ ախչկանը փախցրուց տարավ:

Թքավորն ասավ.— Ուրիշ հնար չկա, Պարտապէյին բերեք, բալքի հնարք անի՝ եդ ախչկանը բերի:

Գնացին Պարապայէյին կանչեցին: Պարտապէյը վեց տղա վե կալավ գնաց: Գնաց Պարտապէյը երգրնի ման էկավ, ման էկավ շատ տեղեր, գնաց գտավ Դնին:

Դնին գտավ, Դնն ասավ.— Պարտապէյ յ, դու ի՞նչ ես շինում ըստեղ, գնանք գինի խմենք:

Պարտապէյն ասավ Ուշապին.— Չէ՛, արի գնանք ես քի գինի խմացնեմ:

Գնացին, Պարտապէյը մի դյուծին, երկու դյուծին գինի առավ, իրուր հետ խմեցին:

Ասավ.— Պարտապէյ յ, ուղտին գդալով ջուր տալ չի լիլ, գնանք ես մի քիչ գինի ունեմ, խմենք:

Պարտապէյին տարավ իրան տան վերին ատեժը, բերեց մի ռումբի գինի դրուց իրան կուշտը, իրան աղաքին դրուց մի վեղրո, նրա աղաքին՝ մի չայի ստաքան: Մի առժամանակ դրանք խմեցին եդ գինին: Պարտապէյը տեհավ, որ Ուշապը հարբում չի, ինքը հարբում ա. մի տաշտ կար, Ուշապը որ վեղրոն քաշեց գլուխը, սա քաշեց տաշտը աղաքը: Ուշապը, որ վեղրոն քաշում էր գլուխը, սա ստաքանի գինին ածում էր տաշտը: Մի վախտից հետո տեհավ, որ Ուշապը հարբեց, մին էլ որ Ուշապը վեղրոն գլուխը քաշեց, Պարտապէյը վե կալավ Ուշապի գուրգեն ու Ուշապի գլխին տվուց: Տվուց՝ շըշկլացրուց, մեկ անգամ էլ տվուց, թքավորի ախչիկն էլ էկավ քոմակ արավ, երկուսով դրան վե դրին, սըպանեցին:

Թքավորի ախչիկն ասավ.— Ցերեկը կարելի չի գնալը, Դնը շատ մարդիկ ունի, կիմանան, կգան մեզ կտոր-կտոր կանեն, պետք ա քշերը գնանք:

Քշերը դրանք Ուշապի ձիանոցեն երկու լավը դուս բերին, վեր էլան, ճամփա ընկան, գնացին ծովի դրաղը: Ծովի դրաղին Պարտապէյը իրան հընկերը թողել էր, վեց հընկերը իրենց միչին խորուրդ արին, թե Պարտապէյին կարենանք մի կերպ փչացնենք, ախչկանը մենք տանենք, որ թքավորից անկըջկալեքը մենք ստանանք:

Պարտապէյը եդ ախչկանիցը մի մտանիք նշան առավ: Մտան պրախտտը, եդ վեց ընկերը չգիտեին, թե դա ախչկանիցը նշան ա առել: Պըտըտեցին եդ Պարտապէյին քցեցին ծովը: Դրաղից մոտիկ էր, Պարտապէյը լեղ գիտեր, լեղ տվուց դուս էկավ: Որ դուս էկավ, իրան ճընանչող մարդ շատ կար, հայտնի մարդ էր: Պարտապէյը գնաց մեկ տեղ ծովի դրաղին միտք անելով քնեց:

Քնեց որ է, էկավ իրան ճնանչող մարդ, ասավ.— Պարտապէյ, քեզ ի՞նչ ա պըտահել, գնանք տուն,— ասավ,— սոված կլիս, հաց կե, ախր ես քի ըտենց չեմ տեհե, էս ի՞նչ ա պըտահել: Բա ի՞նչ ես ուզում ինձանե դու, ի՞նչ տամ, որ լավ ըլի քեզ, ասա տենունք:— Առ,— ասավ,— իմ ձեռիցը էկածը էս ա, մի ձի տամ քեզ, մեկ էլ մի քիսա: Քիսեն,— ասավ,— էնդու հմա եմ տալի քեզ, ինչքան ձեռդ մեջը տանես՝ փող հանես, հատնի ոչ, ձին էլ,— ասավ,— որ տալիս եմ, մի թուր էլ հետը, էս ձին ու թուրը քանի որ քու կշտին ըլի, ինչքան դոշուն գա՝ քեզ կարալ չեն բան անել:

Պարտապէյը ձիուն նստեց, թուրը կապեց վրեն, քիսեն դրուց ջեքը, շնորհակալութիւն արավ, գնաց: Հըմի ցամաքովն ա գնում: Յամաքովը գնաց շատ երկարեց: Գնաց, մի վախտեն եդնը

հասավ թքավորի քաղաքը, տեհավ, որ թքավորի ախչիկը դեռ էկել չի: Թքավորի ամարաթի կշտին դա իրան հմա տներ շինեց՝ թքավորի ամարաթի պես: Տները որ շինեց հա՛, թքավորին բերեց, լավ պատվեց: Մի քանի օրից եղը իմացավ, որ ախչիկը գալիս ա: Ախչիկը էկավ:

Թքավորը կանչեց էդ վեց տղերանցը ասավ. — Պարտապեյը ո՛ւր ա:

Ասին. — Մենք տեհել չենք, մեզանե շըշկըլեց, ուրիշ տեղ գնաց:

— Բա էդ ախչիկը դուք որդիա՞ն բերիք:

Ասին. — Գնացինք Ուշապին գտանք, սըպանեցինք:

Թքավորը հըսկանում ա, որ դրանք չեն սըպանել:

Բերուց իրիկունը դոնախլուդ արավ, իրան մոտիկ մարդկերանց կանչեց: Որ գինի ածեցին՝ խմեին, ախչիկը տեհավ, որ իրա մատնիքը Պարտապեյի մատին ա, հըսկացավ, որ Ուշապին սըպանողը դա ա:

Ախչիկը խաբար արավ, էն վեց տղին կանչեց, ասավ. — Դուք ինձանից ի՞նչ գիտեք, որ ասում եք, թե՛ մենք ենք բերել: Ա՛յ, — ասավ, — Պարտապեյին իմ մտանին նշան եմ տվել, Ուշապին սպանողն ու ինձ բերողը Պարտապեյն ա:

Թքավորն ասավ. — Պարտապե՛յ, իմ ախչիկս տվի քեզ:

Էն վեց տղին էլ սըպանել տվուց:

Էդ ախչկանը բերին Պարտապեյի հետ հըրսանիք արին:

Հըրսանիք արին էդ ախչկանը, ուրիշ մի թքավորի տղա իմացավ, որ էդ ախչիկը հըրսանիք ա ըլել Պարտապեյի հետ, ասավ. — Պետք ա ես Պարտապեյին սըպանեմ, էդ ախչիկը ես ուզեմ:

Պարտապեյին դա տարավ դոնախ ու լավ դոնախ արավ: Էն մեկել օրն էլ Պարտապեյը դրան դոնախ արավ: Պարտապեյին, որ դոնախ արավ, թքավորի ախչիկը էդ տղին խոսքը տվուց, թե . «Ես քեզ կուզեմ»:

Տղեն հմի ուզում ա գնա դոշուն բերե, գոռով էդ ախչկան տանի: Գնաց: Շատ դոշուն բերուց, էկավ դուռը կըտրեց: Պարտապեյը դուս էկավ, տեհավ, որ դոշունը էկել դուռը կըտրել ա . ձին դուս բերուց, թուրը կապեց, ձիուն վեր էլավ, դոշունի մեջը մտավ, դոշունը չիմ ջարդեց, հնենց ջարդեց, խաբար տանող չմնաց:

Թքավորի տղեն տեհավ, որ էդքան դոշունը ջարդեց, էլի դոշուն բերուց, էտպես իրեր: Տեհավ, որ էլի Պարտապեյը ձին նստեց, թուրը կապեց, դոշունը չիմ ջարդեց: Ախչկա վրա էդ տղեն մի գիր գրեց, թե . — Մի իմացի, թե դրա ուժը ընչո՞ւմն ա:

Ախչիկը գիր գրեց, թե . «Իմացա, ուժը թրումն ա, դոշունը ավելցըրու, արի՛»:

Էդ քշերը էդ ախչիկը բերուց էնթավուր մի թուր կախ արավ

ընդեղ, էն թուրը վիկալավ, պըհեց:

Թքավորի տղեն էքսը դոշունը բերուց, ռավոտը էկավ դուռը կտրեց: Պարտապեյը ձին վեր էլավ, թուրը կապեց, ընկավ դոշունի մեջը ըստեղ ա տալի, ընդեղ ա տալի, տենում ա կտրում չի: Զոռագի են էդ ախչիկը վեր ունում տանում: Տանելուց եղը մի քանի օր մնում ա, Պարտապեյը ձին դուս ա բերում, նստում, դու ըլնում:

Գնում ա, որդեղ որ թուրն ու ձին իրեն տվել են՝ ընդեղ:

Ասում ա. — Պարտապե՛յ, էդ ի՞նչ ա պըտահել, որ քեզ ըտենց եմ տենում: Բա հըմիկ ի՞նչ ես ուզում, որ քեզ տված ըլեմ:

Պարտապեյը գլուխը վեր չի ունում:

Էն մարդն ասում ա. — Հըմիկ կտամ քեզ մի մատանիք, մատանին տար, ինչ որ էդ մատանիքիցը ուզես՝ կըլի:

Պարտապեյը մատանիքը վի կալավ, էկավ ձին դուս բերուց, նստեց, ընկավ ճամփա: Էկավ քշեր ու ցերեկ անելեն, հասավ իրան տուն: Տանիցը միօր վե կացավ, գնաց իրան կնիկը

փախցնող թքավորի ամարաթի առաջը, դառավ մի մենձ չինարի ծառ: Էդ ախչիկը դուս էկավ, ասավ.— Թքավորի տղա՛, էդ Պարտապէյն ա, բեր,— ասավ,— կըտրե՛:

Ասավ.— Ա՛յ կնիկ, մենք հագարնի պտինք ծախս ընել, որ էդ թավուր մի ծառ բռնացրնենք, Պարտապէյը ծառ չի դառնալ, դա ծառ ա:

Ասավ.— Ես քեզ ասում եմ՝ կտրե, կփռշմանես:

Բերուց դա, որ կտրե հա՛, կտրելիս տեղը, մի պուճուր ախչիկ ունեին դրավաշ, ասավ,— Վա՛յ, ա՛ ծառ ջան, քեզ կտրիլ պտին:

Ծառն ասավ.— Ախչիկ ջա՛ն, որ կտրեն, մի խուշուր կթոչի, կընկնի քու գոգը, որ ընկնի քու գոգը,— ասավ,— կտանես կգցես ձեր ջրի հավուզը:

Էկան կտրեցին, խուշուրը թռավ ընկավ էն ախչկա գոգը. էն ախչիկը տարավ գցեց իրանց հավուզը:

Թքավորի տղեն ասավ.— Ափսո՛ս, էսթավուր ծառը կտրիլ տվիր, Պարտապէյը ծառ կդառնա՞: Շատ իրուր հետ ընկան էդ ծառի պատճառովը: Եղնա մի օր տեհան, որ էրկու սիրուն աղունիկ էկան, իրանց ամարաթի մեջ ման ին գալի:

Ախչիկն ասավ.— Թքավորի տղա՛, դա Պարտապէյն ա, բռնե՛, կփռշմանես:

Ասավ.— Թքավորի ախչի՛կ, էն թավուր ծառը կտրիլ տվիր, հըմիկ էլ ուզում ես էդ սիրուն աղունիկները սըպանի՛լ տաս:

Էլի ըսենց մի էրկու օր դրանց խոսքը իրար դիպավ: Քշերը որ չքնեցին, էդ աղունիկնին դառան Պարտապէյ, իրան թուրը վի կալավ, դուս էկավ, ձին նի էլավ, գնաց: Գնաց իրան տուն: Գնաց ախչկա հորը կուշտը, ասավ.— Թքավո՛րն ապրած կենա, մի տես քու ախչիկը ինչ բերուց իմ գլուխը, արի գնանք դու մտիկ արա, թե նրան ինչ կանես:

Թքավորին վի կալավ, դուս էկան, ճամփա ընկան: Գնացին տեհան, որ էդ տղեն ու էդ ախչիկը դեռ հլա քնած են, առանցի հարցմունք, առանցի գանգատ Պարտապէյն էրկուսին էլ հենց քնած տեղը կըտորեց:

Թքավորը դրա ճակատը պաչեց:

Վերուց էն պուճուր դարավաշը, որ դրանց տանը կար, չէ՞նա ասավ, թե. «Ա՛ ծառ ջան, քեզ կտրիլ պտին», ընդուր մասին,— ասավ,— իմ դամաթս էս դարավաշն ա,— բերուց էդ դարավաշին թքավորի պայմանովը ուզեց: Բերուց օխտն օր, օխտն քշեր հըրսանիք էլավ: Բերուց իրան տուն: Նրանք հասան իրանց մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին:

Չարըն ընդի բարին ըստի:

Աստծանե էրեք խնձոր վեր ընկավ. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ ալամ աշխարքին: